ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Կարեն Անդրեասյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2022թ. մայիսի 18-ից 19-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպական միության:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Հայաստան-ԵՄ Գործընկերության խորհրդի չորրորդ նիստին:

Քննարկված թեմաները՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկմանը, Հայաստանի և ԵՄ-ի ընդհանուր հանձնառությանը մարդու իրավունքներին, հիմնարար ազատություններին, օրենքի գերակայությանը, ժողովրդավարական սկզբունքներին, դատական և իրավական բարեփոխումների Հայաստանի ազգային ռազմավարությանը և ազգային հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման գործընթացում արձանագրված ձեռքբերումներին առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայաստան-ԵՄ Գործընկերության խորհրդի չորրորդ նիստին մասնակցելու նպատակով ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը 2022թ. մայիսի 18-ից 19-ը գտնվել է Բելգիայի Թագավորությունում (Բրյուսել):

Հայաստան-ԵՄ Գործընկերության խորհրդի չորրորդ նիստին Հայաստանի կողմից մասնակցել են ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը, ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի խորհրդական Մանե Ադամյանը, իսկ ԵՄ պատվիրակությունը ղեկավարում էր Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ և Եվրոպական

միության Բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելը: Հանդիպմանը մասնակցել է նաև Հարևանության և ընդլայնման հարցերով հանձնակատար Օլիվեր Վարհելին:

Հարկ է նշել, որ Հայաստան-ԵՄ Գործընկերության խորհրդի չորրորդ նիստը առաջինն է 2021 թվականի մարտի 1-ին Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) ուժի մեջ մտնելուց հետո:

Գործընկերության խորհրդի նիստին ընդառաջ ԵՄ կողմից հրապարակվել է Գործընկերության խորհրդի 2020 թվականի դեկտեմբերին տեղի ունեցած նիստից ի վեր Հայաստանում և Հայաստան-ԵՄ հարաբերություններում զարգացումների վերաբերյալ Գործընկերության իրականացման զեկույցը, որն ընդգծում է Հայաստանի առաջընթացը ՀԸԳՀ-ի իրականացման գործում և ԵՄ-ի առանցքային դերը գործընթացին աջակցություն ցուցաբերելու մեջ:

Գործընկերության խորհրդի նիստի ընթացքում քննարկվել է ՀԸԳՀ-ի կիրարկումը, որն ընդգրկում է քաղաքական, տնտեսական և առևտրային բնագավառներում համագործակցության ոլորտների լայն շրջանակ, ինչպես նաև արձանագրվել է ձեռք բերված առաջընթացը: ԵՄ-ն ողջունել է Հայաստանի հանձնառությունը ՀԸԳՀ-ի կիրարկմանը, դրական գնահատել իրականացված բարեփոխումները և քաջալերել կառավարությանը՝ շարունակելու բարեփոխումների իր օրակարգը՝ ի շահ Հայաստանի քաղաքացիների, ինչին ԵՄ-ն լիովին աջակցում է:

Գործընկերության խորհուրդը վերահաստատել է Հայաստանի և ԵՄ-ի ընդհանուր հանձնառությունը մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների, օրենքի գերակայության և ժողովրդավարական սկզբունքների ամրապնդման հարցում: Գործընկերության խորհուրդը ողջունել է դատական և իրավական բարեփոխումների Հայաստանի ազգային ռազմավարության և ազգային հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման գործընթացում արձանագրված ձեռքբերումները: ԵՄ-ն կառուցողական քաղաքական երկխոսություն է վարում Հայաստանի հետ և զգալի ֆինանսական ու տեխնիկական աջակցություն է ցուցաբերում բարեփոխումներին ուղղված այս ջանքերին:

Գործընկերության խորհուրդն ի գիտություն է ընդունել ԵՄ-ի հետ վիզային ռեժիմի ազատականացման շուրջ երկխոսություն սկսելու Հայաստանի պատրաստակամությունը: ԵՄ-ն արձանագրել է Վիզաների դյուրացման համաձայնագրի և Ռեադմիսիայի համաձայնագրերի՝ ընդհանուր առմամբ, հաջող իրականացումը և առաջարկել Հայաստանին՝ շարունակելու ջանքերը:

Գործընկերության խորհուրդն ընդգծել է Արևելյան գործընկերության կարևորությունը՝ որպես համագործակցության էական հարթակ: Խորհուրդը նաև վերահաստատել է, որ ժողովրդավարության, արդյունավետ կառավարման, օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների և գենդերային հավասարության հիմնարար խնդիրները մնում են Արևելյան գործընկերության քաղաքականության շրջանակի հիմնասյունը: Գործընկերության խորհուրդը նշել է, որ Հայաստանը կշահի Արևելյան գործընկերության՝ վերականգնման, դիմակայունության և բարեփոխման օրակարգից, ինչպես նաև հավակնոտ Տնտեսական և ներդրումային պլանից՝ ԵՄ-ի և Հայաստանի կողմից որոշված՝ այս օրակարգի հիմքում ընկած ուղենշային նախաձեռնություններով, որոնք կնպաստեն աշխատատեղերի ստեղծմանն ու զբաղվածության աճի խթանմանը, փոխկապակցվածությանը, ինչպես նաև կանաչ ու թվային անցմանը, հարավային շրջանների կրթությանն ու զարգացմանը:

ՀՀ արդարադատության նախարար

Recoverable Signature

X

Karen Andreasyan

Signed by: ANDREASYAN KAREN 2009770196

Կարեն Անդրեասյան

30.05.2022թ.